առտնին կյանքի մեջ և՛ արվեստի մեջ[102], մի այլ տեղ՝ բամբակը[103], կամ այլ բուսական տեսակը[104] կամ վուշը[105]։ Իսկ Մերձավոր արևելքում, նաև Հայկական լեռնաշխարհի բոլոր մասերում բուրդն է, որ կարևոր դեր է խաղացել և իր թելի բնույթը դրոշմել է նաև, օրինակ, այնպիսի գեղարվեստական արտադրանքների վրա, ինչպես գորգերն ու ասեղնագործած զգեստները, խաչքարերն են և նրանց քանդակները։ Կարելի է ասել, որ Հայկական լեռնաշխարհի նախնական կուլտուրան, սկսած շատ հնագույն ժամանակներից մինչև միջնադարի սկզբնավորությունը, հնարավոր է անվանել բրդային։ Վուշը չկարողացավ և չի կարողանում Հայաստանում այսօր էլ բրդից խլել նրա առաջնակարգ նշանակությունը։ Հայկական կենցաղի մեջ վուշը գերազանցորեն յուղատու, ոչ թե թելատու բույս է և ցանվում է գլխավորապես ձեթ ստանալու համար։ Զանգեզուրումն էլ նա բոլորովին չի ճանաչվում որպես թելատու բույս, և վուշի մշակումը թել ստանալու նպատակով տեղում ծանոթ չէ, մինչդեռ բրդի մշակման ձևերը բազմազան են և մասնավորապես թելագործությունը հասնում է բարձր կատարելության։

Ոչխարը խուզում են հատուկ մկրատով, դա չոբանի մասնագիտությունն է։

Գարնան խուզածը, մրծապոնիրը՝ մեծաբուրդը գործ էր ածվում գորգերի, շալի՝ շուխայի, շալվարի, կանանց և տղամարդկանց գոտիների համար։

Կոնոնէրը խոզում ըն ամառը։ Գառան բուրդը նույն նպատակների համար էր գործադրվում, երբ ուզում էին ավելի նուրբ գործվածք ստանալ։

Աշնան սկզբին խուզածը՝ ղրլանը, ավելի կոպիտ լինելով՝ ֆիչա ըն ֆցոնմ, ղցում, շրվալ, սիջիմ և այլ նման իրեր էին շինում։ Աշնանը հոտը նախ քշում էին առվի կամ գետի մեջ, լավ լողացնում և ապա խուզում, սակայն այդ ղրլանն էլ կանայք նորից էին լվանում, ինչպես մրծապոնիրը։

Լվանում էին բուրդը նախ տանը տաք ջրով և ապա տանում կէտը ֆաշրմ մի կարպետի վրա փռելով և ծեծելով, մինչև նոնիր՝ ջուրը պարզվի։ Ապա թաց բուրդը փռում էին մի կարպետի վրա արևի տակ և համարյա չորացած վիճակում սկսում հատ անել ճրպուտավ՝ ճիպոտով ծեծել։ Լավ չորացած բուրդը կոնզրմ ըն՝ գզում են սանդէրֆի[106] վրա. դրա համար հրավիրում էին հարևաններին միջի՝ փոխադարձ օգնության։ Հրավիրվածները գալիս էին իրենց սանդէրֆնէրավ։ Տանտիրուհին այդ օրերը պետք է նրանց լավ հյուրասիրեր։ Միջիի երգեր չեն ստեղծվել, գզում էին իրար հետ հանաքներ անելով և անեկդոտներ պատմելով։

Սանդէրֆի վրա գզելուց հետո բուրդը ֆոլ էին անում (մեծ-մեծ գունդ անում)։

Դոշակի՝ ներքնակի և յորղանի՝ վերմակի բուրդը չէին գզում, առաջինը շինում էին ղրլանից, երկրորդը՝ մրծապոնիրից, ինչպես և պարցէրը՝ բարձերը։

Բուրդը ֆիչայի՝ թաղիքի համար գզելու կանչվում էին մասնագետ կրզողնէր. այդ հմտությամբ հռչակված էին մանավանդ խնձորեսկեցիք, որոնք ման էին գալիս գյուղ գյուղ իրենց հանէղն՝ աղեղն ու շաֆը՝

---

102 Չինաստան, Հնդկաչին, Ճապոնիա։

103 Հնդկաստան։

104 Պոլինեզիա և առհասարակ Օվկիանիա։

105 Միջին ռուսական շրջանները, գերմանական ցածրությունը, մինչև Բելգիա և հյուսիսային Ֆրանսիա։

106 Մեղրու շրջանում՝ սա՛նդարֆ։